

# ՄԷԼԵՏԱՐԷՐ



“ԹՈՂ ՅՈՒՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՅՔ ՈՐ ԻՆՄԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆՆՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒՍԱՐ 1, 1901

ԹԻԻ 1

## ԱՐԵՒԵԼՔԷՆ ԵԿՈՂ ՄՈԳՆԵՐԸ

Որչափ քրիստոնեայնկա-  
րիչներ ջանացած են նկա-  
րել Մատթէոս Աւետա-  
րանչին պատմած այն տե-  
տարանը : Կատարուեցաւ  
խոստումը որ հաղարատը  
տարիներ առաջ եղած էր,  
և յաճախ կրկնուած էր եր-  
կար ժամանակամիջոցի մը  
մէջ, և ծնաւ Աստուածային  
Մանուկը : Անիկա իրեն  
ծննդեան վայր ընտրեց ոչ  
թէ պարատ մը, հապա-  
մաւր մը : Իրեն մայր ընտ-  
րեց ոչ թէ իշխանուհի մը,  
հապա մաքուր և խոնարհ  
կոյս մը, որ այս ընտրու-  
թեան շնորհիւ եղաւ կա-  
նանց մէջ ամենէն մեծը և  
ամենէն պատուաւորը : Եւ  
ի՛նչպէս հմայիչ է մոգե-  
րուն պատմութիւնը : Անոնք  
Հրէից ժողովրդէն չէին, և  
թերևս լսած ալ չէին Հին  
Կտակարանին մէջ գրուած  
մարդարէութիւնները, բայց  
ճշմարտութիւնը և զԱստ-  
ուած անկեղծ օրէն փնտուղ-  
ներ էին : Եւ Աստուած,



որ կը վար-  
ձատրէ բոլոր այսպէս փնտուղնե-  
րը, առաջնորդեց զանոնք դէպ այն  
տեղը ուր գտան Մանուկը, որ ծնած  
էր իշխան և փրկիչ ըլլալու ոչ միայն  
Հրեաներուն, այլ ամբողջ աշխարհին :  
Աստուծոյ համար միթէ դիւրին չէր  
առաջնորդել զանոնք : Չէ՞ որ երկին-  
քի բոլոր լուսաւորները կը հնազանդին  
անոր կամքին : Հրեշտակները եկան և  
ֆրիստոսի ծնունդը երգեցին, վասն  
զի Աստուած հրամայեց անոնց որ  
գան : Աստուղ առաջնորդեց մոգերուն  
անոնց արևեքը զանուող հեռաւոր  
բնակավայրէն, վասն զի Աստուած

հրամայեց : Մոգերը «չատ մեծ ուրա-  
խութիւնով ուրախացան», վասն զի  
իրենց թոյլ տրուեցաւ տեսնել Մա-  
նուկ փրկիչը և երկրպագել անոր, և  
վասն զի թոյլ տրուեցաւ իրենց Անոր  
ընծայել իրենց ընտիր և պատուական  
ընծաները : Մարիամի կամ Յովսէփի  
չէր որ նուիրուեցան ընծաները, հա-  
պա՛ Մանուկին, վասն զի անոնց մե-  
ծութիւնը Անոր հետ կապակցութիւն  
ունենալուն համար էր :  
Եւ մենք կրնանք հաւատալ թէ հի-  
մա կը գտնուին ոչ-ֆրիստոնեայ եր-  
կիրներու մէջ զԱստուած խոնարհու-  
թեամբ փնտուղներ, զորոնք Անիկա


այնպէս կ'առաջնորդէ որ կը գտնեն  
փրկութեան ճամբան : Բայց մեր փոք-  
րիկ ընթերցողները քրիստոնեայ մա-  
նուկներ են. և անոնց «Շնորհաւոր  
Ծնունդ» կը մաղթենք : Աստուած  
շնորհէ որ դուք կարող ըլլաք Բեթլե-  
հեմի մէջ ծնանող փրկչին բերել նուէր-  
ներուն ընտիրը, այսինքն՝ երախտա-  
գէտ սիրտերու անկեղծ սէրը :

ԱՐՁԱՌՆԵՐՈՒ ԿՈՍՏԱՆՊՈԼԻՍԻՆ  
Մինչ կայարանի մը առջև կեցաւ կա-  
ռախուսքը քսան բողբ, կ'ըսէ տիկին  
մը, կը զուարճանայի պատուհանէ մը  
նայելով ջրվէժի մը վրայ, որ գլորելով

կ'իյնար ժայռերուն վրայ և ընդարձակ լճակ մը կը ձևացնէր, և լճակը կը տարածուէր դէպ ի երկաթուղին: Մտակը արջառններու կառախումբ մը կար, և անկէ եկող ողբալի ձայները սիրտս կը ճմլէին: Կառքերը բոլորովին տաք արեգակին մէջ կը կենային, և կառքերուն երկու կողմի պատի ձողերուն միջոցները լեցուն էին քիթերով որ փափաքով շունչերնին ներս կը քաշէին տեսնելով լճակը որ իրենց առջև կը տարածուէր: Ո՞րքան չարչարուած ըլլալու էին այն կենդանիները, մինչ կը տեսնէին շուրը, բայց չունէին անկէ կաթիլ մը որով զովանային իրենց պապական բերանները: Արջառնները ցաւագին կերպով կը բառաչէին, ոչխարները իրարու վրայ կը գլորէին շուրին հասնելու համար մոլեգին ջանքեր ընելով և ողորմագին մայելով, այնպէս որ կը փորձուէի դուրս ելլել և բան մը ընել անոնց համար: Բայց ժամանակը լմննալու մտէր, և մինչ կը վարանէի, երկու փոքրիկ աղջիկներ երևցան և ողորմութեան գործն ըրին իմ ընեկիքէս աւելի աղէկ կերպով: Չկրցայ լսել թէ ինչ ըսին, բայց մինչ բոլոր սրտով կ'աշխատէին, անոնց փոքրիկ երեսները սիրելի կերպարանք մը առին, հակառակ իրենց հին գլխարկներուն, մերկ ոտքերուն և պատրաստուած շրջազգեստներուն: Մէկը քակեց իր գոգնոցը, տարածեց խոտին վրայ, անոր վրայ պարպեց իր դոյլին մէջ գտնուածները, լճակը վազեց և լեցնելով տարաւ մտեցուց խեղճ ոչխարներուն, որոնք իրենց տաք լեզուները երախտագիտութեամբ երկնցուցին անոր հասնելու համար, և այնպէս փափաքով լափեցին պատուական ջուրը, որ փոքրիկ աղջկան գործը գծուարացաւ: Բայց անիկա առաջ և

ետ վազեց և բնաւ չձանձրացաւ, թէ պէտ իր դոյլը շուտով մը կը դատարկէր: Իսկ անոր բարեկամ միւս փոքրիկ աղջիկը շատ մը առուոյտ (եօնճա) և խոտ ժողվեց կովերուն համար, և որովհետեւ դոյլ չունէր, պնակ մը լեցուց ջրով և նետեց փոշոտ խեղճ քիթերուն վրայ որ կառքին պատի ձողերուն մէջէն դուրս ցցուած էին: Երանի՜ թէ կարող ըլլայի ըսել այդ

իրիկուան համար, իբրև յարմար ժամանակ Կիրակիի պատրաստութեան: Ամերիկեան գեղի մը մէջ ուր ժամանակ մը վարժապետութիւն ըրինք, սովորութիւն էր Մուրը Օրը շարաթ գիշեր արևամուտէն հաշուել, և բարի ժողովուրդը մէկ կողմ կը դնէին իրենց գործերը և այդ իրիկուն մէկտեղ գալով աղօթքի ժողով մը կ'ունենային, որպէս զի իրենց միաքերը պատրաստուէին յաջորդ օրուան սրբազան պաշտամունքներուն: Մինչև անգամ եթէ շարաթ գիշերը Կիրակի օրուան մէկ մասը չսպանք, եթէ ճամբտապէս կը սիրենք Տէրունական Օրը, բնական բան մը պիտի ըլլայ մեզի համար, յառաջ դէպ այն նայիլ հաճոյքով անոր պատրաստուելու համար: Հոս կը տեսնենք բարի մարդ մը, որ իր սիրտը Աստուծոյ երկրպագութեան կը պատրաստէ: Յայտնի կ'ըլենայ թէ գործաւոր դասակարգէն է: Աստուածաշունչը բացած է իր առջև, և կը մտածէ իր կարգացածին վրայ: Մտածութիւնը հոգիին մարտողութիւնն է, և աւելի աղէկ է միայն մէկ համար կարգաւ և մտածել անոր վրայ, քան թէ ամբողջ գլուխներ կարգաւ առանց մտածութեան: Տէրունական



փափկասիրտ մանուկներուն, թէ իրենց այդ կարեկցութիւնը ինչպէս գեղեցկացուց այն տաք աղմկալից տեղը, և թէ այդ երկու գթութեան քոյրերուն ինչ անուշ պատկերը առի:

Օրուան հասնինք մեր սիրտերը պատրաստած, որպէս զի օգուտ քաղենք մեր վայելած շնորհաց միջոցներէն:

ՏԱՐԱԹ ԳԻՇԵՐ

Գիտական տեսակետով աւելի շատակ է օրուան սկիզբը կէս գիշերէն հաշուել Եւրոպացուց և Ամերիկացուց պէս, բայց քանի մը առաւելութիւններ կան օրուան սկիզբը արևամուտէն հաշուելուն մէջ. մանաւանդ շարաթ

Օրուան հասնինք մեր սիրտերը պատրաստած, որպէս զի օգուտ քաղենք մեր վայելած շնորհաց միջոցներէն:

ՄՆԴԻԿ

Մնդիկին (ճիվա) ամենէն հետաքրքրական յատկութիւններէն մէկն է ուրիշ մետաղներ հալեցնելու կամ անոնց հետ խառնուելու կարողութիւնը: Եթէ անդիկին մէջ ոսկի թիթեղ մը իյնայ, կ'աներևութանայ, գրեթէ այնչափ արագ ինչպէս ձիւնի հատիկ մը կ'աներևութանայ երբ ջուրն իյնայ:

Մտքի կարող է զատել կամ դիրքաւ լուծել այն յամառ մետաղները որոնց վրայ չեն ներգործեր ամենէն զօրաւոր թթուները: Ոսկիի և արծաթի հանքերու մէջ գործողները զանկա իրենց մեքենաներուն մէջ կը լեցնեն: Այս մեքենաներուն մէջ առաջուց կը գրուի ոսկի պարունակող և փոշիացած քուարց ըսուած քարը: Թէպէտ մարդկային աչք չկրնար նշմարել պատուական մետաղին հետքը, վասն զի շատ նուրբ են մասնիկները, և սակայն հեղուկ մետաղը կ'առնէ զանկա և իր զանգուածին հետ կը խառնէ: Յետոյ թորուելով հանքագործներուն ձեռքը կը յանձնէ ոսկին բոլորովին մաքուր վիճակի մէջ:


Քանի մը տարի առաջ մինչ քիմիաբանութեան վրայ կը դասախօսուէր տիկիններու առջև, քիչ մը անդիկ զբաղու փորձը կատարուեցաւ, զանկա ճնշումով այծեամի մորթէ անցընելով: Այժմեամի մորթը սեղանին վրայ մնաց բանախօսութենէն ետքը, և ծերունի տիկին մը խորհելով թէ ի՞նչ աղէկ բան պիտի ըլլար եթէ իր ոսկի ակնոցն աւոր մէջ ծրարուէր, այնպէս ըրաւ: Հետեւեալ առաւօտ յուզուած գնաց բանախօսող անձին, և ըսաւ թէ ոսկին աներևոյթ եղած էր և ակնոցէն բան մնացած չէր ապակիներէն զատ: Անտարակոյս կաշիին ծակտիքներուն մէջ մնացած անդիկը ոսկիին հետ խառնուած էր և բոլորովին աներևութացած էր ակնոցին մետաղը: Գաղտնիք մըն էր այն, և կարելի չեղաւ բացատրել և գոհ ընել տիկինը:

**ՏՂՈՒ ՄԸ ՕԳՆԵԼՈՒՆ ԲԱՐԻ ԱՐԳԻՒՆՔԸ**

Քանուիրիք տարի առաջ Ուսթըր Համալսարանի նախագահը Լ. Ի. Հոլտըն Գլխավորտ եկաւ, ստակ չունեցող տղայ մը: Օտարական մը, բժիշկ, ապրուստ ճարելու միջոց մը տուաւ անոր: Մօտերս կիրակի օր մը նախագահը Դոդովական եկեղեցիի մը մէջ ըրաւ այդ պատմութիւնը, հետեւեալ կերպով:

Քանուիրիք տարի առաջ այս օրս այս քաղաքը եկայ: Այն ատեն տասնըվեց տարեկան տղայ մըն էի: Ոչ բարեկամ ունէի, ոչ ազգական, ոչ ալ գրպանիս մէջ տոլար մը: Փողոցը կայնեցայ, չփոթած թէ ի՞նչ պիտի ընէի աշխարհի մէջ: Եւ ահա մարդ մը իջաւ գրան մը աստիճաններէն վար, իր բազուկին ներքև ամանով մը, և ինձի դառնարով ըսաւ, «Տղաս, դուն բան մը ունիս:» Ես ըսի, «Ոչ, տէր,

բան չունիմ:» Բայց անկա ըսաւ, «Աղէկ գիտեմ թէ ունիս բան մը:» Վստահացուցի թէ ես աղէկ եմ, բայց ինք իր այցաքարտը տուաւ ինձի և ըսաւ, «Իմ գրասենեակս եկուր կէսօրէն երկու ժամ ետքը և ըսէ ինձի թէ ի՞նչ ներութիւն ունիս:» Ինք բժիշկ էր: Իր գրասենեակը գացի և ըրի պատմութիւնս: Մարդը գործի մը դրաւ զիս, Գլխավորտէ մեկնելէս ետքը չվերադարձայ մինչև որ Ուսթըր Համալսարանի նախագահ եղայ: Բայց կարող չեղայ դիմադրել կինս առնել և փողոց, այն կայնած տեղս, տանելու և ամբողջ այս պատմութիւնն անոր ընելու փորձութեան: Երբեք չէք գիտեր թէ ո՞րչափ բան կ'ընէք տղու մը օգնելով:



ՊԱՍ. ՄԱՐՏԻՐՈՍ ՇՄԱՒՈՂԵԱՆ

Շարաթաթերթ Աւետարեթին մէջ որ այս թերթին հետ կ'ելլէ, այս բարի հովիւին կենսագրութեան առաջին մասը կը գտնուի: Անկա Հայ Աւետարանական առաջին հովիւն էր որուն հետ լաւ ծանօթացանք: Առաջին տարիներու միջոցին երբ բնակեցանք Թուրքիոյ մէջ, մեր մօտ դրացին էր: Կիրակի օրերը անոր քարոզներուն կ'ունկնդրէինք, շարժու մէջ յաճախ կը տեսնէինք զանկա. անոր հետ երկար ճամբորդութիւն մը ըրինք որ քանի մը շարաթ տեւեց. կը յիշենք նաև թէ անոր տունը սեղանի հրաւիրուած ենք: Ինչ որ տեսանք անոր վրայ, համոզեց մեզ թէ չափազանցած չէր բարեկամ մը, որ մեզի հետ խօսակցած ժամանակ ըսաւ թէ երկրին մէջ ամենէն օգտակար մարդոցմէ մին էր անկա: Թէպէտ շատ մեղմ և խոնարհ բնավորութեան տէր էր, բայց իր նկարագրին ազդեցութիւնն այնպէս էր որ միւս հովիւները զանկա զրբթէ իրենց եպիսկոպոսը կը նկա-

տէին և ոչ թէ եղբայր հովիւ մը, թէպէտ անկա աննոցմէ գերազանց չէր համարեր ինքզինք: Սէրը և յարգանքը զոր սովեցանք զգալ դէպ ի նա, զգացինք մինչև անոր կեանքին վախճանը. և սաստիկ վշտով իմացանք 1890ին, երբ մեր Եւրոպա ըրած այցելութենէն դարձանք, թէ մեռած էր մեր բացակայութեան միջոցին: Տակաւին կը գտնուին հազարաւորներ որ երբեք պիտի չգաղբին զանկա սիրելէ: Եւ հոգ չէ, Թուրքիոյ մէջ մեր Աւետարանական Եկեղեցիներուն առաջնորդներուն ցանկը ո՞րչափ փոքր և սահմանաւոր ըլլայ ալ, այդ ցանկին մէջ անշուշտ պէտք է պարունակուի Պատ. Մարտիրոս Շմաւոնեանի անունը:

**ԹԷ ԱՐԱՅ ԻՆՉՊԵՍ ՓԱԽԱԻ**

«Ասանկ բան չըլլար», միմաջ Արայ բարկութեամբ, ճակատը հազար կնճիւններով լեցուն, «թէ որ ուրիշ տղոց պէս չկրնամ ընել, պիտի փախչիմ:» Մայրը շատ տրտմեցաւ, ինչու որ Արայ անոր մէկ հատիկ տղան էր, և անոր այս շարութիւնը սաստիկ ցուցուց իր սիրտը: Արայ հազիւ ինք տարեկան էր, բայց վերջերս այնպէս յամառ և կամապաշտ եղած էր որ մօրը իշխանութեան տակէն գրեթէ ելած էր, և փախչելու այս սպառնալիքը շատ անգամ ըրած էր: Հետեւեալ օրը իրիկուան դէմ վազելով եկաւ դպրոցէն, գիւրքերը վար նետեց, և նորէն դուրս վազեց: Մայրը ետ կանչեց զանկա և հարցուց, «Ո՞ր կ'երթաս, Արայ:» «Ղճակին վրայ քիչ մը պիտի պաշտօնք Օննիկին հետ, ես տուն կու գամ սեղանին առտենը:» «Բայց ահա անձրև կը սկսի, և կոկորդդ տակաւին կը ցաւի, զաւակս: Աւելի աղէկ չըլլար որ Օննիկին ալ կանչես և հացը մէկտեղ ուտենք, այս օգին դուրսը պաշտելու տեղը կը վախճամ ձեզ զրկել ասանկ խոնարհ ատեն մը:» Արայի երեսը կարմրեցաւ բարկութենէն: Գլխարկը վար նետեց և միմաջ. «Ոչ, չեմ ուզեր որ անկա ներս գայ: Ինձի ամօթ է ասանկ կապուիլս: Պիտի փախչիմ, այս պիտի փախչիմ:»

Մայրը բան չըսաւ վայրկեան մը, յետոյ ըսաւ հանդարտօրէն, բայց շատ հաստատ կերպով. «Դուն չես կրնար դուրս ելլել նորէն այս գիշեր, տղաս:» Արայ իր խաղի սենեակը գնաց խոժոռած, կերակուրին ատենը բառ մը չխօսեցաւ, և կերակուրէն ետև իր դասերը սերտեց տխրութեամբ, առանց այն սովորական հարցումներն

